

Առաջիկա հիմնական մարտահրավերները



Օրենքի գերակայություն, դատական բարեփոխումների իրականացում և կոռուպցիայի դեմ պայքար.



Շրջակա միջավայրի հետագա պաշտպանություն և ակտիվ պայքար ընդդեմ կլիմայի փոփոխության.



Սոցիալական կայունության բարելավում՝ **հիբրիդային սպառնալիքներին և ապատեղեկատվությանը** հակազդելու միջոցով.



Քաղաքացիական հասարակության գործունեության միջավայրի ամրապնդում և ազատ ու անկախ մամուլ.



ԵՄ-ի հետ փոխգործակցության ակտիվացում՝ ի նպաստ տարածաշրջանային **հակամարտություններից** տուժած քաղաքացիների կյանքի բարելավման:

2009 թվականին մեկնարկելով որպես համատեղ քաղաքական նախաձեռնություն՝ Արևելյան գործընկերությունը (ԱԳ) նպատակ ունի խորացնել և ամրապնդել հարաբերությունները Եվրոպական միության (ԵՄ), նրա անդամ պետությունների ու իր վեց արևելյան հարևանների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև: Այս շրջանակներում բոլոր գործընկերները պարտավորվել են շոշափելի օգուտներ ապահովել ողջ տարածաշրջանի քաղաքացիների առօրյա կյանքում:

#strongertogether
www.EaP10.eu

EaP | Eastern Partnership 

Արևելյան
գործընկերության
լավագույն
10 ձեռքբերումները՝
վերջին 10 տարում



1

ԵՄ-ն ունի **նոր քաղաքական և տնտեսական երկկողմ համաձայնագրեր**, որոնք ուղենշում են **Արևելյան գործընկեր երկրների մեծամասնության** հետ հարաբերություններն ու համագործակցությունը և **շոշափելի օգուտներ են ապահովում** տարածաշրջանի **քաղաքացիների** համար:

2

Ավելի շատ **առևտրային և ներդրումային հնարավորություններ** ԵՄ անդամ պետությունների և վեց Արևելյան գործընկեր երկրների միջև.
▶ Ավելի շատ ներդրումներ. 2015 թվականից ի վեր **Նշանակալիորեն աճել է** ԽՅԱԱԳ երկրներից **ընկերությունների թիվը**, որոնք **գբաղվում են արտահանմամբ դեպի ԵՄ**. Վրաստանից՝ 35%-ով, Մոլդովայից՝ 40%-ով, Ուկրաինայից՝ 26%-ով:
▶ Ավելի շատ առևտուր. վեց Արևելյան գործընկեր երկրները միասին այժմ հանդիսանում են **ԵՄ-ի 10-րդ առևտրային գործընկերը**: Աճել են նաև **առևտրի ծավալները**. 12%-ով՝ Չայաստանի հետ, 28%-ով՝ Ադրբեջանի հետ, 16%-ով՝ Բելառուսի հետ:

3

Առավել **դիվերսիֆիկացված և կենսունակ տնտեսություններ** ողջ տարածաշրջանում, որոնք ներգրավում են ներդրումներ ու ստեղծում են աշխատատեղեր: ԵՄ-ն տարածաշրջանում աճի ապահովման նպատակով ավելի քան **125.000 վարկ է տրամադրել ՓՄՁ-ներին**, որոնցից ավելի քան **50%-ը՝ տեղական արժույթով**:

4

Տրանսպորտային կապուղիների և ենթակառուցվածքների բարելավում՝ ԵՄ-ի Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի (TEN-T) ընդլայնման ներքո, որով **մինչև 2030 թվականը նախատեսվում է ունենալ 4800 կմ երկաթուղային և նոր ու վերականգնված ճանապարհներ և երկաթգծեր**: Սա նոր հնարավորություններ կբացի տնտեսական զարգացման ու ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև, ինչպես նաև՝ հենց գործընկեր երկրների շրջանում փոխանակումների համար:

5

ԵՄ-ի և Վրաստանի, Ուկրաինայի ու Մոլդովայի միջև արդեն իսկ **ազատ վիզայի ռեժիմ է** գործում: ԵՄ-ն **վիզաների դյուրացման և ռեադմիսիայի (հետընդունման) գործող համաձայնագրեր** ունի Չայաստանի ու Ադրբեջանի հետ և ավարտել է բանակցությունները Բելառուսի հետ: Սրանք առանցքային նշանակություն ունեն **անվտանգ և լավ կառավարվող միջավայրում** ինչպես ԵՄ-ի, այնպես էլ գործընկեր երկրների քաղաքացիների տեղաշարժի համար:

6

Էներգետիկ կայունության և արդյունավետության բարելավում՝ Էներգիայի սպառման և ջերմային գազերի արտանետումների ծավալների նվազեցման ու վերականգնվող էներգիայի չափաբաժնի անընդհատ ավելացման միջոցով.
▶ ԵՄ աջակցության շնորհիվ գրեթե **100 հազար ընտանիք կարողացել է կրճատել իր էներգետիկ վճարներն** ու բարելավել իր կենսամակարդակը:
▶ Քաղաքապետերի դաշնագիրը, որը տեղական էներգիային և կլիմայի գործողության ուղղված ԵՄ-ի ապրանքանիշային նախաձեռնություն է, վերածվել է **400 քաղաքապետարաններից բաղկացած ցանցի, որն ընդգրկում է գործընկեր վեց երկրների բնակչության շուրջ 40%-ը**, մինչդեռ այդ ամբողջ բնակչության ավելի քան 10%-ն օգտվել է քաղաքային ենթակառուցվածքների բարելավումներից՝ E5P հիմնադրամի շնորհիվ:

7

Երիտասարդներին ուղղված աջակցություն, մասնավորապես նրանց **հմտությունների** զարգացման և նրանց **գբաղվածության** խթանման առումով, այդ թվում՝ ԵՄ ծրագրերի նկատմամբ հասանելիության ընդլայնման միջոցով.
▶ **80.000 երիտասարդական փոխանակումներ** մինչև 2020 թվականը, այդ թվում՝ **«Երազմուս+»** ծրագրի միջոցով:
▶ Թբիլիսիում գործարկված **Եվրոպական դպրոցը** բարձրակարգ կրթություն է առաջարկում ապագա առաջնորդներին:

8

Առավել մատչելի և ծառայողական ուղղվածությամբ **հանրային ծառայություններ** ամբողջ տարածաշրջանի **քաղաքացիների համար**՝ վեց երկրներում՝ մեկ պատուհանի սկզբունքով աշխատող քաղաքացիների սպասարկման միասնական կենտրոնների և/կամ էլեկտրոնային կառավարման ծառայությունների շնորհիվ:

9

Գերարագ լայնաշերտ ինտերնետային ցանցի առավել մատչելի հասանելիություն վեց Արևելյան գործընկեր երկրների ավելի քան 700 գիտահետազոտական և ուսումնական հաստատություններում՝ **2 միլիոն գիտնականների, դասախոսների և ուսանողների** համար:

10

Արևելյան գործընկեր երկրների քաղաքացիների շրջանում ԵՄ-ի վերաբերյալ, ինչպես նաև ԵՄ քաղաքացիների շրջանում Արևելյան գործընկերության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում: